

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

#10- հունիս 2014



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և գրադվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

Այս համարում կարդացեք՝

- *«Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը» Մանեի պատմությունը*
- *Աշխատանքի փոքր տոնավաճառներ Շիրակի և Արարատի մարզերում*
- *Շուտով «Ունիսոն-ստուդիո» սոցիալական ձեռնարկության բացումն է*
- *«Մասնագիտական կողմնորոշում և կարիերայի ուղղորդում» թեմայով դասընթաց Վանաձորում*
- *«Ես կարող եմ աշխատել. արդարությունը ձեր ձեռքերում է» քարոզարշավ*
- *Մշակվել է հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանություն*



«ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ»

Մանեն հիմա հաճախ է կարդում իր մասին հրապարակումներն ու երբեմն զարմանում՝ ինչպե՞ս կարողացավ հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ ու հայտնվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում (ԱԻՆ):



Շնունդով Լոռու մարզի Ախթալա գյուղից է: 21 տարեկան: Նախասիրությունները բազմաթիվ են՝ գրականությունից մինչև արվեստ: Նաև ստեղծագործում է: **«Ժամանակին երազում էի համակարգիչ ունենալ՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի շնորհիվ ունեցա: Երազում էի սայլակ ունենալ՝ «Լիարժեք կյանք» ՀԿ-ն նվիրեց»,** - ժպիտով ու անթաքույց հպարտությամբ ասում է Մանեն:

Երազանքների հաջորդաբար իրագործումը Մանեին համարձակություն ներշնչեց աշխատանք որոնելու հարցում: Ինչպես ինքն է ասում՝ բախտը բերեց, և նորից ճանապարհը խաչվեց «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հետ, այս անգամ արդեն LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկացավ, որ ԱԻՆ-ը թափուր աշխատատեղեր է հայտարարել սայլակով տեղաշարժվող անձանց համար: Թերահավատորեն առցանց հայտ ուղարկեց: Անցավ հարցազրույցի փուլը, ապա՝ եռամսյա փորձաշրջանը, և գրեթե մեկ տարի է՝ աշխատում է ԱԻՆ 911 ծառայության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի տեղեկատվական բաժնում: **«Աշխատանքը հիմնովին փոխեց կյանքս: Հիմա ձեր առջև նոր Մանեն է՝ բոլորովին նոր հոգեբանությամբ, նոր մտածելակերպով: Հիմա գունավոր օրերն ավելի շատ են իմ կյանքում, ինչի համար շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ինձ: Անգամ իմ ստեղծագործություններն են ավելի լուսավոր դարձել:»**

Մանեն ԱԻՆ է հասնում տրամադրված հարմարեցված մեքենայով: Օրը հազեցած է անցնում: Շփումներն աշխատանքային միջավայրում նույնպես բարերար են անդրադարձել նրա վրա: **«Չնայած օրեր են լինում, երբ շատ ծանրաբեռնված ենք աշխատում, բայց նույնիսկ այդ ծանրաբեռնվածությունը հաճելի է: Բոլորը միմյանց հանդեպ հարգալից են, ընկերական, երբեմն կատակում ենք, բավական մտերմացել ենք: Աշխատանքային միջավայրը մեր երկրորդ տունն է:»**

Այսբանով, սակայն, Մանեն չի սահմանափակվել: Ներգրավվել է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի հեռահար ուսուցման համակարգում և հաջողությամբ ավարտել այն: Հիմա նաև անգլերեն է սովորում: Առաջիկայում մտադիր է ձեռք բերել երկրորդ մասնագիտությունը՝ Երևանի թիվ 1 տարածաշրջանային քոլեջի «Դիմահարդարում» բաժնում: **«Շատ եմ կարևորում հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթությունը: Ունենալով կրթություն՝ հաշմանդամություն ունեցող անձինք ինքնադրսևորման և կայանալու հնարավորություն են ստանում:»**

Հասարակության վերաբերմունքի մեջ, Մանեի կարծիքով, դրական փոփոխություններ կան: **«Ինձ համազգեստով տեսնելիս մարդկանց աչքերում հարգանք եմ տեսնում ու ինձ ավելի պիտանի եմ զգում իմ հայրենիքի համար,** - ասում է Մանեն ու հպարտ կեցվածքով պատիվ բռնում: - **Շատալում եմ Հայաստանի Հանրապետությանը:»**

Հեղինակ՝ Լուսինե Սարգսյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՔՐ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ ՇԻՐԱԿԻ և ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Ս.թ. հունիսի 15-ից հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում LIFE ծրագրի շրջանակներում կազմակերպվել էին աշխատանքի փոքր տոնավաճառներ գործատուների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ՝ «Ես ԿԱՐՈՂ ԵՄ աշխատել. արդարությունը ձեր ձեռքերում է» խորագրով քարոզարշավի շրջանակներում: «Հյուսան դիգնիթի ընդ փիս» /HDP/ հիմնադրամը անց է կացրել հանդիպումները Շիրակի և Արարատի մարզերի 7 համայնքների հաշմանդամություն ունեցող անձանց և գործատուների համար՝ զբաղվածության կենտրոնների հետ ակտիվ համագործակցությամբ: Կազմակերպված միջոցառումներին մասնակցում էին ընդհանուր առմամբ 30 գործատու՝ ներկայացնելով շուրջ 40 առկա և սպասվելիք թափուր աշխատատեղ:

Տոնավաճառների նպատակն էր հանդիպում կազմակերպել գործատուների և հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող անձանց համար, նպաստել նրանց անկաշկանդ և նպատակային շփմանը, ինչպես նաև առավել մանրամասն ծանոթացնել աշխատաշուկային և դրա պահանջներին: Հանդիպումների ընթացքում գործատուները ներկայացնում էին առկա թափուր աշխատատեղերը, զբաղվածության կենտրոնների տնօրենները ներկայացնում էին հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն աշխատաշուկա հեշտացնելուն ուղղված զբաղվածության ոլորտի վերանայված պետական ծրագրերը, որոնք ակտիվ քննարկման առարկա էին դարձել ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ գործատուների շրջանում:



ՇՈՒՏՈՎ «ՈՒՆԻՍՈՆ-ՍՏՈՒԴԻՈՅԻ» ԲԱՅՈՒՄՆ Է

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդրին լուծում տալու եղանակները տարբեր են՝ մի կողմից գործատուների հետ տարվում է իրազեկման աշխատանք իրենց աշխատակազմերը այս սոցիալական խմբի ներկայացուցիչներով համալրելու նպատակով, իսկ մյուս կողմից որպես լուծում դիտարկվում է սոցիալական ձեռնարկությունների ստեղծման տարբերակը: Նմանատիպ ձեռնարկություններում աշխատակիցները սոցիալապես խոցելի խմբի ներկայացուցիչներն են, իսկ աշխատանքի արդյունքում ստացված եկամուտն ուղղվում է միայն սոցիալական բարեփոխումների վրա:

Սոցիալական ձեռնարկության գաղափարը դեռևս մեծ տարածում չի ստացել Հայաստանում, և այն առայժմ չունի գրանցման կարգ. այս ձեռնարկությունները, ծառայելով իրենց հիմնական նպատակին, առայժմ գործում են սահմանափակ պատասխանատվության ընկերությունների տեսքով:



Վերոնշյալ ձեռնարկությունների թվին է պատկանում նաև LIFE ծրագրի շրջանակներում «Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից ստեղծված «Ունիսոն-Ստուդիո»-ն:

Նախապես ուսումնասիրելով սպառողական մեծ պահանջարկ ունեցող դաշտը՝ «Ունիսոն» ՀԿ-ն նպատակ դրեց լրացնել բացը ֆոտո և վիդեո մոնտաժման աշխատանքների բնագավառում:

Նորայթուխ ձեռնարկությունում կաշխատեն 12 հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք նախապես անցնելով եռամսյա դասընթացների փուլով՝ արհեստավարժ

մասնագետներ կդառնան լուսանկարների և տեսանյութերի մշակման ոլորտում: Դասընթացների մեկնարկը կկատարվի հուլիսին:

Ձեռնարկության համար անհրաժեշտ տարածքի խնդրի հարցում աջակցության ձեռք մեկնեց Երևանի քաղաքապետարանը: Ավագանին որոշեց Էրեբունի վարչական շրջանում անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրել «Ունիսոնին»:

Այսպիսով, պայմանները ստեղծված են, և 2014թ. ավարտական եռամսյակում «Ունիսոն-Ստուդիոն» իր հյուրընկալ դռները կբացի բոլոր ցանկացողների համար:

Ի գիտություն. LIFE ծրագրի շրջանակներում արդեն ստեղծվել է 17 սոցիալական ձեռնարկություն, որտեղ մինչ օրս ներգրավվել են հաշմանդամություն ունեցող շուրջ 110 անձինք: Դրամաշնորհներ ստացողների ցանկում կան տեղական ինքնակառավարման մարմիններ, բիզնես կառույցներ և ՀԿ-ներ:

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՅ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Վերջերս «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղում տեղի ունեցավ «Մասնագիտական կողմնորոշում և կարիերայի ուղղորդում» թեմայով հանդիպում-դասընթաց հաշմանդամություն ունեցող վանաձորցի երեխաների և նրանց ծնողների հետ: Մեմինարը վարեցին «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագրի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն»-ի մասնագետները:

Վերջիններս դասընթացի ընթացքում խոսեցին հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների մասին, ապա ծնողների հետ քննարկեցին այն հարցը, թե ինչպես երեխաներին ճիշտ ուղղորդել մասնագիտություն ընտրելիս: Նշվեց, որ ծրագրի շրջանակներում հիմնվում են հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներից կազմված խմբեր, որոնց հետ պարբերական հանդիպումները միտված են նպաստելու երեխաների կարողությունների ճիշտ գնահատմանն ու մասնագիտական կողմնորոշմանը:

Հանդիպման մասնակիցներն իրենց հերթին կարևորեցին նման միջոցառումների կազմակերպումը՝ նշելով, որ դրանք օգնում են հասկանալ ծնողների դերն ու իրազեկվածության կարևորությունը հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության և հետագա աշխատանքի ապահովման գործում:

Նշենք, որ LIFE ծրագրի շրջանակներում ստեղծվել են 12 նմանատիպ ծնողական խորհուրդներ Երևանի և Արարատի, Լոռու, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի թիրախային դպրոցներում:



**«ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՇԽԱՏԵԼ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է»
ՔԱՐՈՉԱՐՇԱՎ**

2014թ. հունիս-հուլիս ամիսներին «Սեյվ դը չիլդրեն»-ն իրականացրել է «**Ես ԿԱՐՈՂ ԵՄ աշխատել. արդարությունը ձեր ձեռքերում է**» խորագրով քարոզարշավը, որով շեշտադրվում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու կարողությունն ու իրավունքը, ինչպես նաև հավասար աշխատանքային հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը:

Քարոզարշավ նախաձեռնելու անհրաժեշտությունը կարևորվել է նաև LIFE ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությաններով, որոնք փաստում են հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների և զբաղվածության ոլորտում ունեցած կարիքների մասին գործատուների և հանրային իրազեկության պակասը:

Քարոզարշավի շրջանակներում իրականացված միջացառումները ներառել են.

#	Միջոցառում	Ամսաթիվ	Վայր/ Ժամ	Պատասխանատու կազմակերպություն
1	Մասնագիտական կողմնորոշման դասընթաց ՀՈԻ երիտասարդների ծնողների համար	11-ը հունիսի	Լոռու մարզ, ք. Վանաձոր «Օրբան ՀԿ»-ի գրասենյակ	«Սեյվ դը չիլդրեն»/ ԱՍՀՆ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
2	Աշխատանքի փոքր տոնավաճառ	17-ը հունիսի	Շիրակի մարզ, ք. Մարալիկ, ԶԿ	«Սեյվ դը չիլդրեն»/ «Էյջ-Դի-Փի» ՀԿ/ ԶՊԾԳ
3	Մասնագիտական կողմնորոշման դասընթաց ՀՈԻ երիտասարդների ծնողների համար	17-ը հունիսի	Շիրակի մարզ, ք. Գյումրի թիվ 7 դպրոց	«Սեյվ դը չիլդրեն»/ ԱՍՀՆ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
4	Մասնագիտական կողմնորոշման դասընթաց ՀՈԻ երիտասարդների ծնողների համար	18-ը հունիսի	Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ թիվ 1 դպրոց	«Սեյվ դը չիլդրեն»/ ԱՍՀՆ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
5	Աշխատանքի փոքր	20-ը	Շիրակի մարզ,	«Սեյվ դը չիլդրեն»/

	տոնավաճառ	հունիսի	ք. Աշոցք	«Էյջ-Դի-Փի» ՀԿ/ ԶՊԾԳ
6	Մամուլի ասուլիս	20-ը հունիսի	Երևան, Մամուլի ակումբ	«Սեյվ դը չիլդրեն»/ «Ունիսոն» ՀԿ
7	Մասնագիտական կողմնորոշման դասընթաց ՀՈԻ երիտասարդների ծնողների համար	20-ը հունիսի	Արարատի մարզ, գ. Խարբերդ գյուղապետարան	«Սեյվ դը չիլդրեն»/ ԱՍՀՆ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
8	Աշխատանքի փոքր տոնավաճառ	24-ը հունիսի	Շիրակի մարզ, ք. Արթիկ	«Սեյվ դը չիլդրեն»/ «Էյջ-Դի-Փի» ՀԿ/ ԶՊԾԳ
9	Աշխատանքի տոնավաճառ ՀՈԻԱ մասնակցությամբ	26-ը հունիսի	Շիրակի մարզ, ք. Գյումրի	ԶՊԾԳ/«Էյջ-Դի-Փի» ՀԿ
10	Աշխատանքի փոքր տոնավաճառ	30-ը հունիսի	Արարատի մարզ, ք. Մասիս	«Սեյվ դը չիլդրեն»/ «Էյջ-Դի-Փի» ՀԿ/ ԶՊԾԳ
11	«Կարիերայի ուղղորդման հիմնախնդիրներ. զարգացման միտումները» գիտաժողով/ LIFE ծրագրի շրջանակներում իրականացված ծրագրի ավարտական միջոցառում	30-ը հունիսի	ք. Երևան, «Էլիտ պլազա» ԲԿ	«Սեյվ դը չիլդրեն»/Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
12	LIFE ծրագրի շրջանակներում իրականացված ենթադրամաշնորհային ծրագրի ավարտական միջոցառում	2-ը հուլիսի	Շիրակի մարզ, ք. Գյումրի Շիրակի տարածաշրջանային քոլեջ	«Սեյվ դը չիլդրեն»/ Շիրակի տարածաշրջանային քոլեջ
13	LIFE ծրագրի շրջանակներում հիմնված սոցիալական ձեռնարկության բացման արարողություն	8-ը հուլիսի	Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ «ԼԱՅՖ կաֆե»	«Սեյվ դը չիլդրեն»/ «Աստղացուլք» ՀԿ
14	LIFE ծրագրի շրջանակներում իրականացված ենթադրամաշնորհային ծրագրի ավարտական միջոցառում	10-ը հուլիսի	Երևան, Ինֆորմատիկայի պետական քոլեջ	«Սեյվ դը չիլդրեն»/ Ինֆորմատիկայի պետական քոլեջ
15	LIFE ծրագրի շրջանակներում հիմնված սոցիալական ձեռնարկության բացման արարողություն	15-ը հուլիսի	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Հրուշակեղենի արտադրամաս	«Սեյվ դը չիլդրեն»/ «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

16	LIFE ծրագրի շրջանակներում հիմնված սոցիալական ձեռնարկության բացման արարողություն	22-ը հուլիսի	Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, «Մարտունու կանանց համայնքային կենտրոն» ՀԿ	«Մեյվ դը չիլդրեն»/ «Մարտունու կանանց համայնքային կենտրոն» ՀԿ
17	LIFE ծրագրի շրջանակներում իրականացված ենթադրամաշնորհային ծրագրի ավարտական միջոցառում/ցուցահանդես	25-ը հուլիսի	Երևան, «Կոնգրես հյուրանոց»	«Մեյվ դը չիլդրեն»/ «Փրկություն» ՀԿ
18	LIFE ծրագրի շրջանակներում նկարահանված սոցիալական տեսահոլովակների հեռարձակում	15-ը հունիսի – 15-ը հուլիսի	ՀՀ հեռուստաալիք, 5 անգամ/օր	«Մեյվ դը չիլդրեն»/ «Ունիսոն» ՀԿ
19	Մասնակցություն հեռուստահաղորդումներին ներկայացնելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրը	15-ը հունիսի – 15-ը հուլիսի	ՀՀ հեռուստաալիքներ	«Մեյվ դը չիլդրեն»/ գործընկեր ՀԿ-ներ
20	Մասնակցություն ռադիոհաղորդումներին ներկայացնելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրը	15-ը հունիսի – 15-ը հուլիսի	ՀՀ ռադիոալիքներ	«Մեյվ դը չիլդրեն»/ գործընկեր ՀԿ-ներ
21	Սոցիալական ցանցերում քննարկումների կազմակերպում՝ ներկայացնելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրը	15-ը հունիսի – 15-ը հուլիսի	Ինտերնետային սոց. կայքեր	«Մեյվ դը չիլդրեն»/ գործընկեր ՀԿ-ներ
22	LIFE ծրագրի շրջանակներում արձանագրված հաջողության պատմությունների տարածում տպագիր մամուլի միջոցով:	15-ը հունիսի – 15-ը հուլիսի	ՀՀ տպագիր մամուլ	«Մեյվ դը չիլդրեն»/ գործընկեր ՀԿ-ներ

Միջոցառումները կազմակերպվել են մարզային և քաղաքային իշխանությունների, LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործատուների հետ սերտ համագործակցությամբ:

**ՄՇԱԿՎԵԼ Է ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կողմնորոշման գործընթացը առավել համակարգված ու արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը “LIFE” ծրագրի շրջանակներում մշակել է հաշմանդամություն ունեցող երիտասարդների կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցման հիմնական մեթոդաբանություն: Այն մշակվել է տեղական առանձնահատկությունների հիման վրա՝ հաշվի առնելով միջազգային փորձը և այն համապատասխանեցնելով մարդու բազմակողմանի արժևորման ու սահմանափակ կարողությունների սահմանման նոր հասկացողությանն ու ճանաչողությանը: Մեթոդաբանությունը երաշխավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Մեթոդաբանության մաս է կազմում կարիերայի ուղղորդման դիդակտիկ, գունային թեստը (դիդակտիկ ուղեցույց)՝ «Մասնագիտության համակարգային ընտրություն» անվանումով: Թեստը ներկայացնում է մասնագիտական կողմնորոշման բազմաթիվ հնարավորություններ և դրա իսկ միջոցով առաջարկում կարիերայի ընտրության հետևողական ու գիտակցված ընտրություն:

Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնը վերոնշյալ մեթոդաբանությունը ներկայացրեց հունիսի 30-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կազմակերպած գիտաժողովի ընթացքում: Վերջինս համաֆինանսավորվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության միջոցով:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեց նաև այն տևական աշխատանքը, որը կատարվել է հատուկ և ներառական դպրոցների ավարտական դասարաններում սովորող հաշմանդամություն ունեցող մոտ 200 երիտասարդների հետ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպումների միջոցով: Առանձնակիորեն շեշտվեց ներառական կրթության դերը, ինչպես նաև երիտասարդների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության կարևորությունը: Նշվեց, թե ինչպես են հաշմանդամություն ունեցող երիտասարդներն առնչվում դժվարությունների ու խոչընդոտների հետ, ինչպես են դրական մղումով ու տրամադրվածությամբ հաղթահարում խոչընդոտները և ինչպես են ստանում մասնագիտական կողմնորոշում ու կարիերայի ուղղորդման խորհրդատվություն՝ կառուցելու իրենց ապագան:



LIFE ծրագրի մեկնարկից՝ 2012թ. հունվարից մինչ օրս

305

հաշմանդամություն ունեցող անձ
տեղավորվել է աշխատանքի

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Սեյվ դը չիլդրենի» տեսակետները:



Save the Children

«Սեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org

Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am



facebook



youtube